ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 23.06.2014թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ԳԲԽ-19/14 բողոքը քննող հանձնաժողովի

ԳԲԽ-19/14 բողոքը քննող հանձնաժողովը՝ գործելով գնումների բողոքարկման խորհրդի անունից, քննելով ուսումնասիրելով «Խաչատուրյանի Բիլդինգ Գրուպ» ՍՊԸ-ի կողմից 03.06.2014թ. և «Կանժիլստրոյ» ՍՊԸ-ի կողմից 06.06.2014թ. «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին ներկայացված բողոքները, ինչպես նաև ուսումնասիրելով ԳԲԽ-19/14 բողոքի վերաբերյալ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացված եզրակացությունը պարզեց.

1. «Խաչատուրյանի Բիլդինգ Գրուպ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին ներկայացված բողոքով «Խաչատուրյանի Բիլդինգ Գրուպ» ՍՊԸ-ն հայտնել է, որ ընկերությունը մասնակցել է ՀՀ ՔՆ «Քաղաքաշինական ԾԻԳ» ՊՀ-ի կողմից հայտարարված «ՔՆ ՔԾԻԳ-ԲԸԱՇՁԲ-14/8» ծածկագրով բաց (էլեկտրոնային) ընթացակարգին:

Ընթացակարգի գնահատման արդյունքների մասին 23.05.2014թ. հայտարարության 1.1 կետի համաձայն՝ «Աշկար» ՍՊԸ-ի կողմից ընթացակարգի 1-ին չափաբաժնի համար առաջարկված գինը հանդիսացել է նվազագույն գնային առաջարկը, որի արդյունքում վերջինս զբաղեցրել է 1-ին տեղը, «Զեթ-Պրոֆիլ» և «Էյ-Ար-Այ-Սի-Թի» համատեղ գործունեությամբ ներկայացված ընկերություններն, զբաղեցրել են 2-րդ տեղը,

«Խաչատուրյանի Բիլդինգ Գրուպ» ՍՊԸ-ն 3-րդ տեղը, և ««Հայաստանի ապառողական կոոպերատիվների միություն «Ախուրյանի Կոոպշին» ՍՊԸ-ն 4-րդ տեղը:

Նույն հայտարարության 1.2 և 1.3 կետերով համապատասխանաբար՝ «Աշկար» ՍՊԸ-ի և «Զեթ-Պրոֆիլ» և «Էյ-Ար-Այ-Սի-Թի» համատեղ գործունեությամբ ընկերությունների ներկայացված հայտերը մերժվել են, այսինքն ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով 1-ին տեղն զբաղեցրած մասնակից պետք է ճանաչվեր «Խաչատուրյանի Բիլդինգ Գրուպ» ՍՊԸ-ն:

Ընկերությունը հայտնել է, որ 23.05.2014թ. հայտարարության 1.4 կետով արձանագրվել է, որ «Խաչատուրյանի Բիլդինգ Գրուպ» ՍՊԸ-ն իր կողմից ներկայացված հայտի թիվ 2 հավելվածով ներկայացրել է հայտարարություն, որի համաձայն ընկերությունը չունի ժամկետանց պարտքեր ՀՀ հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով: Սակայն պատվիրատուի կողմից իրականացվել է հարցում Պետական եկամուտների կոմիտե՝ նշված հայտարարության իսկությունը պարզելու համար, որին ի պատասխան ստացվել է տեղեկատվություն, որի համաձայն՝ «Խաչատուրյանի Բիլդինգ Գրուպ» ՍՊԸ-ն 2014թ. մայիսի 8-ի դրությամբ ունեցել է ժամկետանց պարտավորություններ եկամտային հարկի գծով:

Պատվիրատուն՝ հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասը, որի համաձայն. «Հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են», 2011թ. փետրվարի 10-ի ՀՀ կառավարության թիվ 168 որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 87-րդ կետը և Պետական եկամուտների կոմիտեի 22.05.2014թ. N 11-4/6226-14 գրությունը՝ մերժել է «Խաչատուրյանի Բիլդինգ Գրուպ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը:

Նույն հայտարարության 1.10 կետով արձանագրվել է, որ հիմք ընդունելով մասնակիցների կողմից ներկայացված հայտերը և գնային առաջարկները՝ 1-ին տեղն զբաղեցրած մասնակից է ճանաչվել ««Հայաստանի ապառողական կոոպերատիվների միություն «Ախուրյանի Կոոպշին» ՍՊԸ-ն՝ որպես բավարար գնահատված և նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից:

«Խաչատուրյանի Բիլդինգ Գրուպ» ՍՊԸ-ն հայտնել է, որ ընկերության հայտը մերժվել է անհիմն՝ հետևյալ հիմնավորմամբ.

Ընկերության կողմից Պետական եկամուտների կոմիտեին է ներկայացվել հաշվետվությունների ճշգրտում, որի արդյունքում պարզվել է, որ «Խաչատուրյանի Բիլդինգ

Գրուպ» ՍՊԸ-ն 2014թ. մայիսի 8-ի դրությամբ չի ունեցել եկամտային հարկի գծով ժամկետանց որևէ պարտավորություն:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

«Խաչատուրյանի Բիլդինգ Գրուպ» ՍՊԸ-ն գտնում է, որ «ՔՆ ՔԾԻԳ-ԲԸԱՇՁԲ-14/8» ծածկագրով բաց (էլեկտրոնային) ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից ընկերության հայտը մերժելու արդյունքում խախտվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված պահանջները՝ խնդրելով դադարեցնել «ՔՆ ՔԾԻԳ-ԲԸԱՇՁԲ-14/8» ծածկագրով բաց (էլեկտրոնային) ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից ընկերության հայտը մերժելու և անբավարար գնահատելու, ««Հայաստանի ապառողական կոպերատիվների միություն «Ախուրյանի Կոոպշին» ՍՊԸ-ին ընթացակարգի 1-ին չափաբաժնով որպես առաջին տեղն զբաղեցրած մասնակից ճանաչելու, ինչպես նաև ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով պայմանագիր կնքելու մասին որոշումները:

<u>2. «Կանժելստրոյ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստերը, հիմնավորումները և պահանջը.</u>

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին ներկայացված բողոքով «Կանժելստրոյ» ՍՊԸ-ն հայտնել է, որ ընկերությունը մասնակցել է ՀՀ ԱՆ «Քաղաքաշինական ԾԻԳ» ՊՀ-ի կողմից հայտարարված «ՔՆ ՔԾԻԳ-ԲԸԱՇՁԲ-14/8» ծածկագրով բաց (էլեկտրոնային) ընթացակարգին:

Ընթացակարգի գնահատման արդյունքների հայտարարության 6.3 կետով արձանագրվել է, որ «Կանժելստրոյ» ՍՊԸ-ն թիվ 2 հավելվածով ներկայացրել է հայտարարություն, որի համաձայն՝ «Կանժելստրոյ» ՍՊԸ-ն չունի ժամկետանց պարտքեր ՀՀ հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով: Պատվիրատուի կողմից իրականացվել է հարցում Պետական եկամուտների կոմիտե՝ պարզելու նշված հայտարարության իսկությունը, որին ի պատասխան ստացվել է տեղեկատվություն, որի համձայն «Կանժելստրոյ» ՍՊԸ-ն 2014թ. մայիսի 8-ի դրությամբ ունեցել է ժամկետանց պարտավորություններ եկամտային հարկի գծով: Պատվիրատուն, հիմք ընդունելով

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասը, որի համաձայն. «Հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են», 2011թ. փետրվարի 10-ի ՀՀ կառավարության թիվ 168 որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 87-րդ կետը և Պետական եկամուտների կոմիտեի 15.05.2014թ. N 11-4/6004-14 գրությունը՝ մերժել է «Խաչատուրյանի Բիլդինգ Գրուպ» «Կանժելստրոյ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը:

«Կանժելստրոյ» ՍՊԸ-ն հայտնել է, որ ընկերության հայտը մերժվել է անհիմն, քանի որ «Կանժելստրոյ» ՍՊԸ-ի կողմից Պետական եկամուտների կոմիտեին ներկայացվել է հաշվետվությունների ճշգրտում և պարզվել է, որ ընկերությունը 2014թ. մայիսի 8-ի դրությամբ չի ունեցել եկամտային հարկի գծով ժամկետանց պարտավորություններ:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասը, որի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

«Կանժելստրոյ» ՍՊԸ-ն գտնում է, որ խախտվել է Գնումների մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված պահանջները՝ խնդրելով դադարեցնել «ՔՆ ՔԾԻԳ-ԲԸԱՇՁԲ-14/8» ծածկագրով բաց (էլեկտրոնային) ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից՝ «Կանժելստրոյ» ՍՊԸ-ի հայտը մերժելու և անբավարար գնահատելու, «Բազալտ-ԷՄ» ՍՊԸ-ին ընթացակարգի 6-րդ չափաբաժնով որպես առաջին տեղն զբաղեցրած մասնակից ճանաչելու և ընթացակարգի 6-րդ չափաբաժնի մասով պայմանագիր կնքելու մասին որոշումները:

<u>3. ՀՀ ՔՆ «Քաղաքաշինական ԾԻԳ» ՊՀ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը և հիմնավորումները.</u>

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը 05.06.2014թ. N 04/032-1014 գրությամբ և 09.06.2014թ. N 04/032-1034 գրությամբ դիմել է ՀՀ ՔՆ «Քաղաքաշինական ԾԻԳ» ՊՀ-ին՝ խնդրելով կարծիք տալ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ում 03.06.2014թ. «Խաչատուրյանի Բիլդինգ Գրուպ» ՍՊԸ-ի և 06.06.2014թ. «Կանժիլստրոյ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքների վերաբերյալ:

ՀՀ ՔՆ «Քաղաքաշինական ԾԻԳ» ՊՀ-ն 11.06.2014թ. N ՀՍ/1-413-14 գրությամբ «Խաչատուրյանի Բիլդինգ Գրուպ» ՍՊԸ-ի և «Կանժիլստրոյ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքների վերաբերյալ հայտնել է հետևյալը.

«Խաչատուրյանի Բիլդինգ Գրուպ» ՍՊԸ-ն և «Կանժիլստրոյ» ՍՊԸ-ն մասնակցել են ՀՀ ՔՆ «Քաղաքաշինական ԾԻԳ» ՊՀ-ի կողմից կազմակերպված «ԲԸԱՇՁԲ-14/8» ծածկագրով գնման գործընթացների 1-ին և 6-րդ չափաբաժիններին: Մասնակիցների հայտերի բացումը տեղի է ունեցել 2014թ. մայիսի 8-ին: Բողոք ներկայացրած մասնակիցները հայտի թիվ 2 հավելվածով ներկայացրել են հայտարարություններ, որոնց համաձայն վերջիններս չունեն ժամկետանց պարտքեր Հայաստանի Հանրապետության հարկային վճարների գծով:

Ղեկավարվելով 2011թ. փետրվարի 10-ի ՀՀ կառավարության թիվ 168-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 87-րդ կետով՝ իրականացվել է հարցում պետական եկամուտների կոմիտե՝ նշված տեղեկությունները ստուգելու նպատակով, որին ի պատասխան ստացվել է տեղեկատվություն, որի համաձայն «Խաչատուրյանի Բիլդինգ Գրուպ» ՍՊԸ-ն և «Կանժիլստրոյ» ՍՊԸ-ն 2014թ. մայիսի 8-ի դրությամբ ունեցել են ժամկետանց հարկային պարտավորություններ:

Ղեկավարվելով նույն կարգի 87-րդ կետով, որի համաձայն՝ եթե մասնակցի ներկայացրած տվյալների իսկության ստուգման արդյունքում տվյալները որակվում են իրականությանը չհամապատասխանող, ապա գնման գործընթացներին տվյալ մասնակցի մասնակցությունը դադարեցվում է և «Գնումների մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասով, որի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են՝ Պատվիրատուի կողմից «Խաչատուրյանի Բիլդինգ Գրուպ» ՍՊԸ-ի և «Կանժիլստրոյ» ՍՊԸ-ի հայտերը մերժվել են:

Գնահատող հանձնաժողովի բոլոր գործողությունները եղել են իրավաչափ, քանի որ պաշտոնական աղբյուրներից ստացված տվյալների համաձայն ստացվել են այնպիսի տեղեկություններ, որոնք հիմք են հանդիսացել տվյալ մասնակիցների հայտերը մերժելու համար՝ ընդ որում, տվյալ իրավիճակում գնահատող հանձնաժողովը ոչ միայն իրավունք ուներ, այլ նաև պարտավոր էր մերժել տվյալ մասնակիցների հայտերը, հակառակ դեպքում կխախտվեր «Գնումների մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասը:

Բողոք ներկայացրած մասնակիցները բողոքում, որպես հիմնավորում նշել են միայն այն, որ հայտը մերժվել է անհիմն, քանի որ Պետական եկամուտների կոմիտեին ներկայացվել է հաշվետվությունների ճշգրտում և պարզվել է, որ «Խաչատուրյանի Բիլդինգ Գրուպ» ՍՊԸ-ն և «Կանժիլստրոյ» ՍՊԸ-ն 2014թ. մայիսի 8-ի դրությամբ չեն ունեցել հարկային պարտավորություններ և պահանջել են դադարեցնել գնահատող հանձնաժողովի որոշումները: Այսինքն, բողոք ներկայացրած մասնակիցները ընդունում են, որ հարկային պարտավորությունները ընթացակարգի բացման ժամանակ առկա է եղել, որը հետագայում իրենց իսկ կողմից ներկայացված հաշվետվությունների ճշգրտման արդյունքում վերացել է, մինչդեռ՝ Գնումների բողոքարկման խորհուրդն իրավունք ունի դադարեցնելու գնումների ընթացակարգի ընթացքում պատվիրատուի կամ գնահատող հանձնաժողովի կայացրած առանձին որոշումներ, եթե այդպիսի որոշումները եղել են ոչ իրավաչափ, իսկ պատվիրատուի (գնահատող հանձնաժողովի) գործողությունները կարող են համարվել ոչ իրավաչափ, եթե այդպիսի գործողություններով խախտվել են գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջները:

Գնահատող հանձնաժողովի որոշումների իրավաչափությանն անդրադառնալիս պետք է քննարկման հարց դարձնել, թե արդյոք այն խախտել է գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջները նման որոշում կայացնելու պահին և այս առումով բողոքի շրջանակներում հայտի մերժման որոշումը կարող էր համարվել ոչ իրավաչափ, եթե մերժման հիմքը՝ հարկային ժամկետանց պարտավորությունը՝ բացակայել էր նման որոշման կայացման պահին, մինչդեռ՝ ինչպես արդեն իսկ նշվեց, ստացված պաշտոնական աղբյուրների համաձայն բողոք ներկայացրած մասնակիցները 2014թ. մայիսի 8-ի դրությամբ ունեցել են հարկային պարտավորություններ, որը հիմնավորվում է Պետական եկամուտների կոմիտեի 22.02.2014թ. թիվ 11-4/6226-14 և 15.05.2014թ. թիվ 11-4/6004-14 գրություններով, իսկ հաշվետվությունների ճշգրտումները տեղի են ունեցել ավելի ուշ, քան հայտերի ներկայացման և մերժման վերջնաժամկետը:

Գնահատող հանձնաժողովի որոշումը չի կարող ոչ իրավաչափ համարվել այնպիսի փաստի ուժով, (հաշվետվությունների վերահաշվարկ), որն առաջացել է նման որոշման կայացումից հետո, քանի որ եթե գնահատող հանձնաժողովի գործողությունը ոչ իրավաչափ է եղել, ապա այն կատարման պահին պետք է խախտեր գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջները: Սակայն այն կայացման պահին չէր կարող խախտել սահմանված պահանջները, քանի որ հաշվետվությունների ճշգրտումը տեղի է ունեցել ավելի ուշ՝ հայտերի մերժման վերաբերյալ որոշման կայացումից հետո և այսպիսով, գնահատող

հանձնաժողովի որոշումների իրավաչափությունը գնահատելիս պետք է հիմք ընդունել այն հանգամանքը, թե արդյոք նման որոշումների կայացման ժամանակ մերժման հիմքը առկա է եղել, թե ոչ: Եթե մերժման հիմքը բացակայել է, ապա գնահատող հանձնաժողովի որոշումը չի կարող համարվել իրավաչափ, իսկ եթե այդպիսի հիմքը առկա է եղել, ապա այն համարվում է իրավաչափ, անկախ այն հանգամանքից, թե հետագայում նշված հիմքը կվերանար, թե ոչ՝ մինչդեռ բողոքի շրջանակներում գնահատող հանձնաժողովի կողմից որոշումներ կայացնելու ժամանակ մերժման հիմքը առկա է եղել:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն անձինք՝ որոնք ունեն ժամկետանց պարտքեր Հայաստանի Հանրապետության հարկային վճարների գծով, հետևաբար, անկախ այն հանգամանքից, թե ընթացակարգի բացումից՝ 2014թ. մայիսի 8-ից հետո, մասնակիցների հարկային պարտավորությունները ինչ հիմքով կդադարեին, կլինի դա հաշվետվությունների ճշգրտում, հարկերի վճարում թե այլ հանգամանք, «Խաչատուրյանի Բիլդինգ Գրուպ» ՍՊԸ-ն և «Կանժիլստրոյ» ՍՊԸ-ն 2014թ. մայիսի 8-ին իրավունք չունեին մասնակցելու գնման գործընթացին, իսկ վերջիններիս ներկայացրած հայտերը ենթակա էին մերժման, քանի որ հայտերի բացման օրվա դրությամբ հարկային պարտավորությունը առկա է եղել, իսկ հաշվետվությունների ճշգրտումը տեղի է ունեցել ավելի ուշ՝ ընդ որում, անգամ եթե հարկային պարտավորության առաջացումը պայմանավորված լիներ սխալ ներկայացված հաշվետվություններով, ապա դրա հետևանքի ռիսկը կրում է միայն տվյալ մասնակիցը, քանի որ ինքն է պարտավոր հաշվետվությունները ներկայացնել սահմանված պահանջների պահպանմամբ:

ՀՀ ՔՆ «Քաղաքաշինական ԾԻԳ» ՊՀ-ն գտնում է, որ «Խաչատուրյանի Բիլդինգ Գրուպ» ՍՊԸ-ի և «Կանժիլստրոյ» ՍՊԸ-ի կողմից «ԲԸԱՇՁԲ-14/8» ծածկագրով գնման գործընթացով ներկայացված բողոքներն անհիմն են և ենթակա են մերժման:

<u>4. ԳԲԽ-19/14 բողոքի վերաբերյալ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի դիրքորոշումը.</u>

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը հանձնաժողովին ներկայացրել է իր եզրակացությունը և առաջարկել է «Խաչատուրյանի Բիլդինգ Գրուպ» ՍՊԸ-ի կողմից 03.06.2014թ. և «Կանժիլստրոյ» ՍՊԸ-ի կողմից 06.06.2014թ. «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին ներկայացված բողոքները բավարարել՝ դադարեցնել «ՔՆ ՔԾԻԳ-

ԲԸԱՇՁԲ-14/8» ծածկագրով բաց (էլեկտրոնային) ընթացակարգի գնահատող հանձնաժողովի «Խաչատուրյանի Բիլդինգ Գրուպ» ՍՊԸ-ի հայտը մերժելու և անբավարար գնահատելու, «Հայաստանի սպառողական կոպերատիվների միություն «Ախուրյանի Կոոպշին» ՍՊԸ-ին ընթացակարգի 1-ին չափաբաժնով որպես առաջին տեղն զբաղեցրած մասնակից ճանաչելու և ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով պայմանագիր կնքելու մասին որոշումները, «Կանժելստրոյ» ՍՊԸ-ի հայտը մերժելու և անբավարար գնահատելու, «Բազալտ-ԷՄ» ՍՊԸ-ին ընթացակարգի 6-րդ չափաբաժնով որպես առաջին տեղն զբաղեցրած մասնակից ճանաչելու և ընթացակարգի 6-րդ չափաբաժնի մասով պայմանագիր կնքելու մասին որոշումները:

5. ԳԲԽ-19/14 բողոքի վերաբերյալ էական նշանակություն ունեցող փաստերը, ԳԲԽ-19/14 բողոքը քննող հանձնաժողովի հիմնավորումները և եզրահանգումները.

«Գնումների աջակցման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը (այսուհետ՝ նաև Կենտրոն), ուսումնասիրել է «Խաչատուրյանի Բիլդինգ Գրուպ» ՍՊԸ-ի կողմից 03.06.2014թ. և «Կանժիլստրոյ» ՍՊԸ-ի կողմից 06.06.2014թ. ներկայացված բողոքները, «ՔՆ ՔԾԻԳ-ԲԸԱՇՁԲ-14/8» ծածկագրով բաց ընթացակարգի գնահատման արդյունքների մասի 23.05.2014թ. հայտարարությունը (այսուհետ՝ նաև Հայտարարություն), ՀՀ պետական եկամուտների կոմիտեի 22.02.2014թ. N 11-4/6226-14 և 15.05.2014թ. N 11-4/6004-14 գրությունները, ՀՀ ֆինանսների նախարարության էջմիածնի տարածքային հարկային տեսչության 20.06.2013թ. N 50-5/593467 և Նաիրիի տարածքային հարկային տեսչության 20.06.2013թ. N 1191 գրությունները, ՀՀ ՔՆ «Քաղաքաշինական ԾԻԳ» ՊՀ-ի (այսուհետև՝ նաև Պատվիրատու) 11.06.2014թ. N ՀՍ/1-413-14 գրությունը և դրան կից փաստաթղթերը, «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի եզրակացությունը:

ՀՀ ՔՆ «Քաղաքաշինական ԾԻԳ» ՊՀ-ի կողմից աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ՔՆ ՔԾԻԳ-ԲԸԱՇՁԲ-14/8» ծածկագրով բաց (էլեկտրոնային) ընթացակարգ (այսուհետև՝ նաև Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով ի թիվս այլ ընկերությունների հայտ են ներկայացրել նաև «Խաչատուրյանի Բիլդինգ Գրուպ» ՍՊԸ-ն և «Կանժիլստրոյ» ՍՊԸ-ն:

Պատվիրատուն Ընթացակարգի գնահատման արդյունքների մասին 23.05.2014թ. հայտարարության՝

- 1.4 կետով արձանագրել է, որ «Խաչատուրյանի Բիլդինգ Գրուպ» ՍՊԸ-ն իր կողմից ներկայացված հայտի թիվ 2 հավելվածով ներկայացրել է հայտարարություն, որի համաձայն ընկերությունը չունի ժամկետանց պարտքեր ՀՀ հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով: Սակայն պատվիրատուի կողմից իրականացվել է հարցում Պետական եկամուտների կոմիտե՝ նշված հայտարարության իսկությունը պարզելու համար, որին ի պատասխան ստացվել է տեղեկատվություն, որի համաձայն՝ «Խաչատուրյանի Բիլդինգ Գրուպ» ՍՊԸ-ն 2014թ. մայիսի 8-ի դրությամբ ունեցել է ժամկետանց պարտավորություններ եկամտային հարկի գծով,
- 6.3 կետով արձանագրվել է, որ «Կանժելստրոյ» ՍՊԸ-ն թիվ 2 հավելվածով ներկայացրել է հայտարարություն, որի համաձայն՝ «Կանժելստրոյ» ՍՊԸ-ն չունի ժամկետանց պարտքեր ՀՀ հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով: Պատվիրատուի կողմից իրականացվել է հարցում Պետական եկամուտների կոմիտե՝ պարզելու նշված հայտարարության իսկությունը, որին ի պատասխան ստացվել է տեղեկատվություն, որի համաձայն «Կանժելստրոյ» ՍՊԸ-ն 2014թ. մայիսի 8-ի դրությամբ ունեցել է ժամկետանց պարտավորություններ եկամտային հարկի գծով:

Պատվիրատուն՝ հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասը, ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 87-րդ կետը և Պետական եկամուտների կոմիտեի 15.05.2014թ. N 11-4/6004-14 և22.05.2014թ. N 11-4/6226-14 գրությունները՝ մերժել է «Կանժելստրոյ» և «Խաչատուրյանի Բիլդինգ Գրուպ» ՍՊԸ-ների կողմից ներկայացված հայտը:

«Խաչատուրյանի Բիլդինգ Գրուպ» ՍՊԸ-ն 03.06.2014թ. Կենտրոնին ներկայացրած բողոքով հայտնել է, որ ՀՀ պետական եկամուտների կոմիտեին է ներկայացվել հաշվետվությունների ճշգրտում, որի արդյունքում պարզվել է, որ՝ «Խաչատուրյանի Բիլդինգ Գրուպ» ՍՊԸ-ն 2014թ. մայիսի 8-ի դրությամբ չի ունեցել եկամտային հարկի գծով ժամկետանց որևէ պարտավորություն:

«Կանժելստրոյ» ՍՊԸ-ն 06.06.2014թ. Կենտրոնին ներկայացրած բողոքով հայտնել է, որ ՀՀ պետական եկամուտների կոմիտեին է ներկայացվել հաշվետվությունների ճշգրտում, որի արդյունքում պարզվել է, որ՝ «Կանժիլստրոյ» ՍՊԸ-ն 2014թ. մայիսի 8-ի դրությամբ չի ունեցել եկամտային հարկի գծով ժամկետանց որևէ պարտավորություն:

Բողոքաբեր ընկերությունները «ՔՆ ՔԾԻԳ-ԲԸԱՇՁԲ-14/8» բաց ընթացակարգի հրավերի N 2 հավելվածով ներկայացրել են ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին իրենց տվյալների համապատասխանության մասին հայտարարություններ, որոնցով հայտնել և հավաստել են, որ չունեն ժամկետանց պարտքեր Հայաստանի Հանրապետության հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով:

Կենտրոնը 13.06.2014թ. N 04/032-1072 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ խնդրելով հայտնել, թե արդյոք «Խաչատուրյանի Բիլդինգ Գրուպ» ՍՊԸ-ն և «Կանժիլստրոյ» ՍՊԸ-ն 2014 թվականի մայիսի 8-ի դրությամբ ունեցել են ժամկետանց պարտքեր Հայաստանի Հանրապետության հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով:

ՀՀ ֆինանսների նախարարության Էջմիածնի տարածքային հարկային տեսչությունը 20.06.2013թ. N 50-5/593467 գրությամբ հայտնել է, որ «Խաչատուրյանի Բիլդինգ Գրուպ» ՍՊԸ-ի եկամտային հարկի գծով ժամկետանց պարտավորությունները (ներառյալ հաշվարկված տույժերը) 2014թ. մայիսի 8-ի դրությամբ կազմել է 239.673 ՀՀ դրամ: 2014թ. մայիսի 26-ին «Խաչատուրյանի Բիլդինգ Գրուպ» ՍՊԸ-ն էլեկտրոնային եղանակով Էջմիածնի ՏՀՏ-ին է ներկայացրել վարձու աշխատողի և պայմանագրային եկամուտ ստացող ֆիզիկական անձի անհատական տվյալների գրանցման հայտեր, որոնցում առկա տվյալներով թվով 7 աշխատակցի 2014թ. հունվարի 1-ի դրությամբ ազատել է աշխատանքից և ներկայացրել է 2014թ. հունվար և փետրվար ամիսների համար ճշտված եկամտային հարկի և պարտադիր կուտակային վճարի ամսական ամփոփ հաշվարկներ (թվով 3 աշխատողի համար), միևնույն օրը էլեկտրոնային եղանակով Էջմիածնի ՏՀՏ-ին է ներկայացրել վարձու աշխատողի և պայմանագրային եկամուտ ստացող ֆիզիկական անձի անհատական տվյալների գրանցման հայտեր, որոնց հիման վրա 2014թ. մարտի 1-ի դրությամբ աշխատանքի է ընդունել 7 քաղաքացու, ինչի արդյունքում եկամտային հարկի գծով պարտքը վերահաշվարկվել է և 08.05.2014թ. դրությամբ կազմել է 80197 ՀՀ դրամ գերավճար:

Նաիրիի տարածքային հարկային տեսչությունը 20.06.2013թ. N 1191 գրությամբ հայտնել է, որ «Կանժիլստրոյ» ՍՊԸ-ին 2014թ. ընթացքում տրամադրվել է թվով 2 տեղեկանք 24.01.2014թ. և 16.05.2014թ. առանց հարկային պարտավորությունների: «Կանժիլստրոյ» ՍՊԸ-ն 31.05.2014թ. էլեկտրոնային եղանակով Նաիրիի ՏՆՏ-ին ներկայացրել է 2013թ.

հունվար փետրվար և 2014թ. հունվար, փետրվար ամիսների համար եկամտային հարկի և պարտադիր կուտակային վճարի ամսեկան ճշտված ամփոփ հաշվարկներ:

Նաիրիի տարածքային հարկային տեսչությունը տեղեկացրել է, որ 08.05.2014թ. դրությամբ «Կանժիլստրոյ» ՍՊԸ-ն չունի ժամկետանց հարկային պարտավորություններ:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի.

- 5-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն անձինք՝ որոնք ունեն ժամկետանց պարտքեր Հայաստանի Հանրապետության հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով:
- 31-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Գտնում ենք, որ «Խաչատուրյանի Բիլդինգ Գրուպ» ՍՊԸ-ի և «Կանժիլստրոյ» ՍՊԸ-ի կողմից «ՔՆ ՔԾԻԳ-ԲԸԱՇՁԲ-14/8» բաց ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտով ներկայացված ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին իրենց տվյալների համապատասխանության մասին հայտարարությունները համապատասխանում են Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով սահմանված պահանջներին:

Վերոգրյալի հիման վրա և հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի 2-րդ կետը գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. «Խաչատուրյանի Բիլդինգ Գրուպ» ՍՊԸ-ի կողմից 03.06.2014թ. և «Կանժիլստրոյ» ՍՊԸ-ի կողմից 06.06.2014թ. «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին ներկայացված բողոքները բավարարել:

2. Դադարեցնել «ՔՆ ՔԾԻԳ-ԲԸԱՇՁԲ-14/8» ծածկագրով բաց (էլեկտրոնային) ընթացակարգի գնահատող հանձնաժողովի.

«Խաչատուրյանի Բիլդինգ Գրուպ» ՍՊԸ-ի հայտը մերժելու և անբավարար գնահատելու, ««Հայաստանի սպառողական կոոպերատիվների միություն «Ախուրյանի Կոոպշին» ՍՊԸ-ին ընթացակարգի 1-ին չափաբաժնով որպես առաջին տեղն զբաղեցրած

մասնակից ճանաչելու և ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով պայմանագիր կնքելու մասին որոշումները,

«Կանժելստրոյ» ՍՊԸ-ի հայտը մերժելու և անբավարար գնահատելու, «Բազալտ-ԷՄ» ՍՊԸ-ին ընթացակարգի 6-րդ չափաբաժնով որպես առաջին տեղն զբաղեցրած մասնակից ճանաչելու և ընթացակարգի 6-րդ չափաբաժնի մասով պայմանագիր կնքելու մասին որոշումները:

Գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

Գնումների բողոքարկման խորհրդի կայացրած որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

Բողոքը քննող հանձնաժողովի՝

Նախագահ՝ Ազգանուշ Ֆրանգյան

Անդամներ՝ Արմինե Նամալյան

Վիկտորյա Ղազարյան